ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 15 >> սեպտեմբերի 2015 թվական N 1984 Գ քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆԻ, ԳԱՌՆԱՌԻՃԻ, ԳԵՂԱՆԻՍՏԻ, ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆԻ, ՇԻՐԱԿԻ, ՊԵՄԶԱՇԵՆԻ, ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴԻ, ՏՈՒՖԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ, ԱՐԵՎԻԿԻ, ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի՝ <<2015 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին>> N 27-Ա որոշման 1-ին կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասենի, Գառնառիճի, Գեղանիստի, Նահապետավանի, Շիրակի, Պեմզաշենի, Վահրամաբերդի, Տուֆաշենի համայնքների ղեկավարների և Անուշավանի, Արևիկի, Նահապետավանի համայնքների ավագանու անդամների հերթական ընտրությունները նշանակել 2015 թվականի դեկտեմբերի 6-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչություն, Հայաստանի Հանրապետության թիվ թիվ 33, 35, 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ, Բասենի, Գառնառիճի, Գեղանիստի, Նահապետավանի, Շիրակի, Պեմզաշենի, Վահրամաբերդի, Տուֆաշենի, Անուշավանի և Արևիկի համայնքների ղեկավարներին:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝